

ԱՆԿՈՐՆՁԵԼԻ ԱԻԱՆԴԸ

Վաթսուն երեք տարիներ անցած են Հայաստանի Հանրապետութեան հռչակումէն ի վեր: Վաթսուն երեք տարիներ ետք, Սարգարապատի, Բաշ-Աբարանի եւ Ղարաքիլիսայի շքեղ յաղթանակներուն յաջորդող Մայիս 28ի պատմական աքթը մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ ոչ թէ մարած է, այլ՝ աւելի պայծառացած: Վերջին տասնամեակներու քաղաքական փորձութիւններուն մէջ, հայը դարձած է աւելի գիտակից իր իրաւունքներուն եւ աւելի պահանջատէր: Անկախութիւնը, հայ ժողովուրդի մէկտեղումը իր միաւորեալ հայրենիքին մէջ՝ այժմ քաղաքական մտածողութեան համընդհանուր առանցքը կը կազմէ, Հայաստանէն Սփիւռք: Հայրենիքը, ազատ եւ անկախ պետականութեամբ օժտուած բնօրրանը հայութեան, անոր քաղաքական մտածողութեան խարխիսն է:

Ամէն ազգ ունի պատմութեան համար հիմնական նշանակութիւն ունեցող իրադարձութիւններ, որոնք իր դիմագիծը կը բնորոշեն եւ իր նկարագիրը կը յայտնաբերեն: Ազգային տօները ազգի մը խորագոյն ապրումներուն, հաւաքական ձգտումներուն, արժանապատուութեան եւ գոյատեւելու կամքին արտայայտութեան եզակի առիթները կը կազմեն: Անոնք ազգը յատկանշող երեւոյթներ են: Մայիս 28ը, ումանց համար իրրեւ Հայաստանի պետականութեան հիմնադրութեան թուական, որիչներու համար՝ տակաւին միայն Սարգարապատի յաղթանակի տարեդարձ, ամէն պարագայի պատմակալի

դէպք է, հայ ժողովուրդի դիմագիծը բնորոշող, հայուն հպարտութիւն ներշնչող համազգային տօն է:

Այլ կերպ չէր կրնար ըլլալ: Դարերու անազատ, գրեթէ ճորտացած, տեւաբար ճնշուած վիճակէն ետք, վեց հարիւր տարի առանց պետականութեան մնալէ ետք զանազան ազգերու տիրապետութեան տակ, 1915ին իր պատմութեան մեծագոյն արհաւիրքը ապրելէ ետք, կոտորակուած, ջարդուած ու տարագիր հայ ժողովուրդը, մէն մինակ իր դարաւոր ոսոխին դիմաց որ կը պատրաստուէր տակաւին մահացու վերջին հարուածը տալ մնացորդացին, հայը ոտքի կրցականգնիլ ու շանդալից յաղթանակներ տարաւ: Հրաշքի՞ արդիւնք էին Սարգարապատի, Բաշ Աբարանի ու Ղարաքիլիսայի յաղթանակները: Դիպուածի՞ արդիւնք էին մեր արժանապատուութիւնը վերականգնող, մեզ մեր պատմութեան հետ հաշտեցընող խոյանքները: Պատահականութեան արդիւնք էին հայ ազգի կամքին, նկարագրին ու ձգտումներուն այնքան վճռակամ արտայայտութիւնները:

Ոչ, հրաշք չկար, դիպուածը տեղ չունէր պատահականութիւնը բացակայ էր Սարտարապատէն: Հոն ներկայ էր հայութեան պատմութեան վճիռը: Ոչ կ'ըսէ մեր պատմահայր Խորենացին, որ ողբալէ առաջ «հիւսիսային ազգերու մէջ վեհագոյնի» անկախութեան կորուստը, կ'արձանագրէ:

S. Ճ.

(Շարունակութիւնը էջ 2)

ԱՆԿՈՐՆՁԵԼԻ ԱՄԱՆԻՇ

(Շարունակուած էջ 1էն)

Քէպէտ մենք փոքր անուկներ ու թիւով շատ սահմանափակ ու զօրութեամբ թոյլ, եւ շատ անգամ օտար թագաւորութիւններու կողմէ նշանուած, բայց եւ այնպէս մեր երկրին մէջ ալ գրեթե եւ յիշատակելու արժանի շատ մը սիրազորութիւններ կատարուած են:

Կարճ եղաւ անկախ Հայաստանի շրջանը: Անկախութիւնը կը հռչակուէր հազիւ 11.000 քառ. տարածութեամբ հողամասի մը վրայ, ուր խռնուած էր 300.000ի հասնող արեւմտահայ գաղթականութիւնը: Ռուս զինուորական եւ քաղաքական վարչութեան քաշուելէն ի վեր, գոյութիւն ունեցող պետական միակ կառոյցը Երեւանի Ազգային խորհուրդն էր, որ իր ճիգերը կեդրոնացուցած էր ճակատի պայտանութեան գործին: Հայոց անկախութիւնը կը հռչակուէր երկրի մը վրայ որ անբախտի էր վերածուած, ուր հիւանդութիւնները կը ջարդէին ժողովուրդը, ուր կը պակսէր ալիւր, հազուստեղէն, պարէն, ամէն բան:

Պէտք էր վերջերք կապել, պետութիւն եւ քաղաքային վարչութիւն կազմել, դատարաններ հիմնել, դպրոցներ բանալ, անտեսական եւ ելեւձերտական կեանքը կազմակերպել: Այդ գործին լծուեցան, անասելիօրէն զօտարին պայմաններու մէջ, Հայաստանի կառավարութիւն եւ Հանրային գործիչներ:

Այնքան մեծ էր սպասումը Հայութեան մօտ, այնքան սրտին մօտ էր հայ ժողովուրդին անկախութեան գաղա-

փարը, որ անոր փաստին առջեւ, հայութիւնը Հայաստանի մէջ եւ անկէ դուրս, ցուցարբերեց անօրինակ խանդավառութիւն մը ու կարճ ժամանակի ընթացքին՝ Հայաստանի Հանրապետութիւնը վերածուեցաւ կազմակերպուած պետականութիւն ունեցող երկրի:

Հայաստանի անկախ գոյութեան երկու ու կէս տարիներու ընթացքին իրարու յարող 4 կառավարութիւնները դադար չունեցան բնաւ պատերազմ վրաստանի եւ Ատրպէյճանի հետ սահմանային վէճերու հետեւանքով, երկրէն ներս թաթար, թուրք փոքրամասնութիւններու խափանարարական արարքներու զսպում, համայնավարական մայիսեան պայտանութեան զսպում: Բացառաբար անկախ պայմաններու մէջ գործեց Հայաստանի իշխանութիւնը ու հակառակ այդ բոլորին, անկախութեան իրազօրծումները բացառիկ տարողութեամբ կը ներկայանան այսօր մեզի:

Իրագործումներէն լիատուրը հայկական պետականութեան գաղափարին ստեղծումըն էր եւ արմատացումը: 1918 Մայիս 28ին, մենք կրօնական համայնք էինք իսկ մեր հայրենիքը՝ հայերով բնակուած շրջան: Մայիս 28էն ետք՝ պետականութիւն ունեցող ազգ դարձանք, իսկ մեր դարաւոր հայրենիքը վերջապէս Հայաստան դարձաւ: Հայաստան բառին ինչ անական ալ ընտրուի, ազատ անկախ թէ խորհրդային, այդ հողամասին վրայ իր պետական ուրոյն կառոյցը ունե-

նալու իրաւունքը հայ ժողովուրդը նուաճած է Մայիս 28ը նախորդող յաղթական կռիւներով ու զայն արմատացուցած երկուցուկէս տարուան անկախ գոյութեամբ: Ներկայ Խորհրդային Հայաստանը շարունակութիւնն է Ազատ եւ Անկախ Հայաստանին:

Երկրորդ հիմնական իրագործումը Հայաստանի հողին մաքրագործումն է թըշնամի տարրերէն եւ ստեղծումը միաձոյլ ազգաբնակչութեան մը, որ անկախ Հայաստանի գոյութեան հիմնական երաշխիքը ըլլալէն ետք, մնաց հիմնական երաշխիք՝ Խորհրդային Հայաստանի գոյութեան: Խորհրդային Հայաստանը իր 90 տոկոսի հասնող զուտ հայկական ազգաբնակչութիւնը կը պարտի անկախ Հայաստանի կարճատեւ գոյութեան ընթացքին. հայ քաղաքական եւ մարտական գործիչներու հեռատես, խելացի եւ հայրենասիրական գործելակերպին:

Երրորդ իրագործումը Հայութեան եւ Հայաստանի անկախութեան իրաւունքին միջազգային ճանաչումն է: Այդ իրաւունքը նուիրագործուեցաւ Սեւրի դաշնագրով, որուն տակ իբրեւ գերիշխան պետութեան մը ներկայացուցիչը ստորագրեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեան: Հակառակ Սեւրի դաշնագրի փոխարինող Լօզանի դաշնագրի ուրացումին, միջազգային այդ պարտամուրհակը, իրեն կապուած Ռիլիսընի սահմանային վճռագրին հետ, կը մնայ Հայաստանի անկախութեան իրաւունքի անժամանցելի

փաստաթուղթը: Զորքորդը հայութեան զանազան հարուածներուն միաձուլումն էր ազգային միակամրողութեան մը մէջ: Մեր թշնամիներու ձեռքով պատռոտուած էր Հայաստաը ու ստեղծուեց ինչ ուսահայաստան, թրքահայաստան, պարսկահայաստան: Ստեղծւէր էին ուսահայ, պարսկահայ ու թրքահայ: Հայաստանի Հանրապետութեան հրոշակման առաջին տարեդարձին առիթով, Հայաստանի կառավարութիւնը Հայաստանը կը յայտարարէր Միացեալ, Ազատ եւ Անկախ, պետական միակ կառոյցի մը մէջ ամփոփելով ազատագրուած Ռուսահայաստանի եւ թրքահայաստանի գաւառները: Այդ յայտարարութեան հաւատարիմ կը մնայ հայ ժողովուրդը մինչեւ այսօր:

Հինգերորդը ազատ պետութիւն ստեղծելու, ինքզինք կառավարելու ու ժողովրդական կարգի պահպանելու հայ ժողովուրդի ունակութեան ապացուցումն է: Վեց հարիւր տարուան ստրկութենէն ետք, կարճ ժամանակի մէջ քաղաքական եւ ընկերային կառոյցներ ստեղծելու, օրէնսդիր ժողով, երեսփոխանական ժողով ու պետական ժողովրդավար կարգուսարք ստեղծելու ընդունակութիւնը ազազակող դարձաւ առաջին իսկ օրէն ու հերքեց, միանգամընդամիշտ, հայ ժողովուրդի անկախ պետութեան մը մէջ ապրելու անկարողութիւնը:

Հայաստանի անկախ պետականութիւնը եղաւ արդիւնքը հայ յեղափոխական շարժման, իր իրաւունքներու ձեռքբերուման համար հայ ժողովուրդի մղած պայքարին:

Հայ յեղափոխական շարժումը ճնաւ իբրեւ պատասխան թրքական անհանդուրժողութեան եւ ժամանակի կայսերապաշտ ու մեծապետական ախորժակներով առաջնորդուող պետութիւններու շնական վերաբերումին: Այսօր եւս, հայ ժողովուրդը իր արդար իրաւունքներու պահանջին դիմաց կը գտնէ միեւնոյն կայսերապաշտական եւ մեծապետական խղերը, թրքական միեւնոյն անհասկացողութիւնը:

Հայութիւնը պատրաստ է ու տրամադիր իր պահանջներու հետապնդումը կատարելու խաղաղ միջոցներով, վէճերու ու տարակարծութիւններու հարթումին ձեռնարկելու խօսակցութիւններով, իր իրաւունքներուն տիրանալու համբերատար բանակցութիւններու ճամբով:

Սակայն, հայ երիտասարդութիւնը տրամադիր չէ օրորուելու սին խոստումներով: Իր հայրենիքին մէջ ապրելու կամքը, երկար ըսպասումը վերագործեցուց, կրնա՞ր տարրեր ըլլալ, մարտական տրամադրութիւնները եւ վերածարձեց անթեղուած կրակը: Հայ երիտասարդութիւնը, հաւատարիմ մօտաւոր անցեալի յեղափոխական անդններուն, կը պոթկայ «Հայրենիք կամ մահ» կանչով:

Թող զօղանջն Սարգսրապատի յուշակոթողին գանգերը մայիսեան այս առաւօտուն, թող զօղանջն ու իրենց ալիքները տարածեն գրաւեալ որացած Հայաստանին վրայ ու թող տանին հայրենի տարին, դաշտին ու ջուրին հաւատարիմ հայութեան ողջոյնը: